ԱՐԱԳ ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐ ՖԻՆԱՆՍԱԲԱՆԿԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

5 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 2026թ.

ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ, Հայաստանի Բանկերի Միություն ՀԿ

ԱՋԱԿԻՑՆԵՐ

ՄաստերՔարտ, FinTech Armenia

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մրցաշարին կարող են մասնակցել ՀՀ բանկերը, վարկային, վճարահաշվարկային, ներդրումային և ապահովագրական կազմակերպություններ ներկայացնող թիմերը: Մրցաշարը կացնկացվի անհատական և թիմային ձևաչափով, ըստ ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների, շվեյցարական մրցակարգով՝ 6-7 խաղափուլով:

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

Անհատական մրցանակներ.

- 1-ին տեղ – Հանգիստ Հայաստանի հանգստյան վայրերից մեկում /3 գիշեր, 2 անձի համար/
- 2-րդ տեղ – Հանգիստ Հայաստանի հանգստյան վայրերից մեկում /2 գիշեր, 2 անձի համար/
- 3-րդ տեղ – Հանգիստ Հայաստանի հանգստյան վայրերից մեկում /1 գիշեր, 2 անձի համար/

Թիմային մրցանակներ.

- 1-ին տեղ գրաված թիմ – Հայաստանի ժամանցի վայրերից մեկի սերտիֆիկատ /ընտրելու հնարավորությամբ/
- 2-րդ տեղ գրաված թիմ – Հայաստանի ժամանցի վայրերից մեկի սերտիֆիկատ /ընտրելու հնարավորությամբ/
- 3-րդ տեղ գրաված թիմ – Հայաստանի ժամանցի վայրերից մեկի սերտիֆիկատ /ընտրելու հնարավորությամբ/

Հատուկ մրցանակներ.

Հաղթող թիմի համար սահմանված է **հատուկ մրցանակ** Հայաստանի Բանկերի Միության կողմից: Մրցանակը Հայաստանի Բանկերի Միության Ուսումնական և Որակավորման Կենտրոնի կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթաց է /Թիմի անդամները 3 ամսվա ընթացքում, ըստ իրենց ցանկության, կարող են ընտրել մեկ դասընթաց և մասնակցել անվճար/:

FinTech Armenia-ն անհատական մրցաշարի մրցանակակիրների համար սահմանել է հատուկ մրցանակներ.

1-ին տեղ – Ելույթի հնարավորություն (Speaking Slot) և մասնակցության տոմս FinTech Summit համաժողովին

2-րդ տեղ – Մասնակցության տոմս FinTech Summit համաժողովին

3-րդ տեղ – Մասնակցության տոմս FinTech Summit համաժողովին

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

5 դեկտեմբերի	12:00	1-ին տուր,
5 դեկտեմբերի	12:30	2-րդ տուր,
5 դեկտեմբերի	13:00	3-րդ տուր,
5 դեկտեմբերի	13:30	4-րդ տուր,
5 դեկտեմբերի	14:30	5-րդ տուր,
5 դեկտեմբերի	15:00	6-րդ տուր,
5 դեկտեմբերի	15:30	7-րդ տուր:

ՄՐՑԱԿԱՐԳ

Անցկացվելու է **մեկ** մրցաշար, որտեղ կիրառվելու է անհատական և թիմային հաշվարկ:

Անհատական հաշվարկ

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակները չեն կիսվում, իսկ տեղերը կորոշվեն. հատված Բուհգոլցով, այնուհետև Բուհգոլցով, անձնական հանդիպումների արդյունքի /արդյունքների/ և սև գույնով խաղացած պարտիաների քանակով:

Թիմային հաշվարկ

Թիմում մասնակցիների քանակը չպետք է գերազանցի 3-ը, իսկ թիմային մրցանակային տեղերը որոշելու համար հաշվի է առնվելու թիմի մասնակիցներից 2-ի լավագույն արդյունքը:

Թիմի մասնակիցների կազմը մրցաշարի մեկնարկից հետո փոփոխության ենթակա չէ: Թիմի մասնակիցները պետք է հանդիսանան տվյալ կազմակերպության աշխատակից: Թիմի անդամները մրցաշարի ընթացքում չեն խաղալու միմյանց դեմ:

Մրցանակների հավակնող թիմերի հավաքած միավորների հավասարության դեպքում հաշվի է առնվում անհատական մրցաշարում թիմի մասնակիցների ավելի բարձր տեղ գրաված արդյունքը:

ԺԱՄԱԿԱՐԳ

10 րոպե մինչև պարտիայի ավարտը (2 վայրկյան հավելումով՝ յուրաքանչյուր քայլին, սկսած առաջին քայլից):

ՄՈՒՏՔԱՎՃԱՐ

Թիմային մասնակցություն – յուրաքանչյուր թիմի մասնակցության վճարը կազմում է **150 000 ՀՀ դրամ**:

Անհատական մասնակցություն – եթե բանկից միայն մեկ մասնակից է ցանկանում մասնակցել, ապա անհատական մասնակցության վճարը կազմում է **60 000 ՀՀ դրամ**:

Փոխանցումները անհրաժեշտ է կատարել հետևյալ բանկային հաշվին՝

Շահառու՝	Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ
Բանկ՝	Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/հ՝	1570018417800100
ՀՎՀՀ՝	02560522

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել կազմակերպության անունը, կոնտակտային հեռախոսահամար, մասնակցության վճար:

ԳՐԱՆՑՈՒՄ

Հայտեր ներկայացնելու վերջնաժամկետն է 2026 թվականի դեկտեմբերի 3-ը, ժամը 18:00-ն:

Կնքված և ստորագրված հայտը /կազմակերպության բլանկով/ կարող եք ուղարկել info@chessacademy.am էլեկտրոնային հասցեին:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ

Մրցաշարը կանցկացվի Հայաստանի շախմատի ակադեմիայում /ք. Երևան, Շևչենկո 34/:

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Հեռ՝ +374 10 448473, +374 43 448473, Էլ. փոստ՝ info@chessacademy.am